ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Ք. ԴՈՒԲԱՅ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Գևորգ Մանթաշյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Արաբական Միացյալ Էմիրություններ (քաղաք Դուբայ), 2023թ. նոյեմբերի 30–ից դեկտեմբերի 2-ը:

4. **Հրավիրող կողմը.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության նախաձեռնությամբ:

5. **Գործուղման նպատակը.**

2023 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 12-ը Արաբական Միացյալ Էմիրություններում անցկացվող ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (ԿՓՇԿ) 28-րդ համաժողովին (այսուհետ՝ COP-28) մասնակցելու և մասնակցության շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ԱՄԷ կիբեռանվտանգության խորհրդի միջև «Կիբեռանվտանգության ոլորտում համագործակցության վերաբերյալ» Փոխըմբռնման հուշագրի ստորագրման գործընթացն իրականացնելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները.**

ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության համաժողովն անցկացվում է ամեն տարի՝ հանդիսանալով կլիմայի փոփոխության վերաբերյալ որոշումների կայացման միակ բազմակողմ հարթակն աշխարհում՝ քննարկելու կլիմայական ճգնաժամի հաղթահարմանն ուղղված քայլերը:

Այցի շրջանակներում ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի գլխավորած հայկական պատվիրակության կազմում Գևորգ Մանթաշյանը մասնակցել է համաժողովի բացման

արարողությանը, հանդիպել հայկական համայնքի ներկայացուցիչների հետ, մասնակցել միջոցառման շրջանակներում կայացած բարձր մակարդակի մի շարք հանդիպումների:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Համաձայն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ԱՄԷ կիբեռանվտանգության խորհրդի միջև ձեռք բերված պայմանավորվածության՝ COP 28-ի շրջանակներում դեկտեմբերի 1-ին կողմերի միջև ստորագրվել է «Կիբեռանվտանգության ոլորտում համագործակցության վերաբերյալ» Փոխըմբռնման հուշագիր: Հուշագիրը փոխգործակցություն է հաստատում կողմերի միջև համակարգչային հարձակումների հայտնաբերման, կանխարգելման, հետևանքների վերացման հարցերում փոխադարձ ջանքերը, տեխնիկական և մարդկային ռեսուրսները համախմբելու, ինչպես նաև տեղեկատվական անվտանգությանն առնչվող միջադեպերի արձագանքման հարցերում համագործակցությունը բարելավելու նպատակով: Էմիրաթական կողմից՝ հուշագիրը ստորագրել է ԱՄԷ կառավարության Կիբեռանվտանգության խորհրդի ղեկավար Մուհամեդ Համադ Ալ Քուվեյթին: Վերջինիս հետ հանդիպման ընթացքում քննարկվել են հուշագրի իրականացման և ոլորտային համագործակցության ծրագրերը, երկկողմ համագործակցության հեռանկարները:

Միջոցառման շրջանակներում ս.թ. դեկտեմբերի 2-ին Գևորգ Մանթաշյանը մասնակցել է «Գործընկերության միջոցով կլիմայի եզակի խոցելիության խնդրի լուծումը» խորագրով, «Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների բարձր մակարդակի հարակից միջոցառմանը», որի նպատակն էր ուշադրություն հրավիրել դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների առջև ծառացած հրատապ խնդիրների վրա կլիմայի փոփոխության և կապի ոլորտներում:

Այս բարձր մակարդակի հանդիպմանը մասնակցել են պետությունների և կառավարությունների ղեկավարներ, նախարարներ, պատվիրակությունների ղեկավարներ և կլիմայի փորձագետներ դեպի ծով ելք չունեցող 32 երկրներից և այլ շահագրգիռ կողմեր:

Հանդիպմանը Գևորգ Մանթաշյանը համաժողովի մասնակից ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցչի առաջարկով ՀՀ պատվիրակության անունից հանդես է եկել ելույթով, ներկայացրել կլիմայի փոփոխության դեմ համաշխարհային պայքարում Հայաստանի կողմից ձեռնարկվող քայլերը՝ ընդգծելով, որ Հայաստանը վճռականորեն աջակցում է կլիմայի փոփոխության դեմ պայքարին՝ ձեռնարկելով գործնական քայլեր վերոնշյալ ուղղությամբ: Հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկվել են կլիմայական մարտահրավերների

ազդեցությունները, կիսվել իրենց փորձով, առաջարկություններով՝ դեպի ծով ելք չունեցող երկրների համար արագացնելու կլիմայի փոփոխության հարմարվողականությունը՝ նպաստելով վերջիններիս կայուն զարգացմանը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում ԱՄԷ կառավարության Կիբեռանվտանգության խորհրդի ղեկավար Մուհամեդ Համադ Ալ Քուվեյթիի հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները հուշագրի շրջանակներում համատեղ գործողությունների իրականացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ: Միջոցառման մասնակից գործընկեր երկրների ներկայացուցիչների հետ քննարկվել են երկկողմ համագործակցության հեռանկարները, ապագայում դրանք կյանքի կոչելու հնարավորություններն ու եղանակները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆ

06.12.2023թ.